ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2018 թվականի N 208-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Մովսես Աշոտի Դանիելյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 47-ր փողոցի թիվ 8 հասցեի տնամերձ հողամասում նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հունիսի 2018 թվականի N 209-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վիլհելմ Վլադիմիրի Կարապետյանի (ծնված՝ 1936 թվականի հուլիսի 10-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել իր կողմից փաստացի օգտագործվող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-122-0023 կադաստրային համարի 502,9 քառ.մետր մակերեսով հողամասը և հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2018 թվականի հունիսի 1-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Վիլհելմ Վլադիմիրի Կարապետյանի կողմից փաստացի օգտագործվող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-122-0023 կադաստրային համարի այգեգործական հողամասի մակերեսը կազմում է 502,9 քառ.մետր, որտեղ 1995 թվականին ինքնակամ կառուցել է կիսանկուղային հարկով երկհարկանի այգետնակ, աստիճան, հարթակ, ծածկարան, սանհանգույց, աստիճանավանդակ, հենապատ և պարիսպ՝ 338,71 քառ.մ ընդհանուր արտաքին մակերեսով:

Վիլհելմ Վլադիմիրի Կարապետյանի կողմից ինքնակամ զբաղեցված հողակտորը համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ինչպես նաև հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում:

Վիլհելմ Վլադիմիրի Կարապետյանի կողմից Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-122-0023 կադաստրային համարի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վիլհելմ Վլադիմիրի Կարապետյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-122-0023 կադաստրային համարի՝ իր կողմից փաստացի օգտագործվող 502,9 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վիլհելմ Վլադիմիրի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-122-0023 կադաստրային համարի անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Այգեգործական 42-րդ թաղամաս, թիվ 11/1 և այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2018 թվականի N 210-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գուրգեն Վարդանի Մկրտչյանին, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացմամբ և ժամը 24^{00}-ից հետո զվարճանքի կազմակերպմամբ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 1, 3 հասցեում:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Գուրգեն Վարդանի Մկրտչյանին, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունիսի 2018 թվականի N 211-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Վահէ Հակոբի Աբրահամյանի դիմումը հողամասից կամովին հրաժարվելու մասին, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վահէ Հակոբի Աբրահամյանի կողմից կամովին հրաժարված 07-057-0333-0091 կադաստրային համարի 43,37 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբանում՝ իրավունքների պետական գրանցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 18
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունիսի 2018 թվականի N 212-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Բաբկեն Գուրգենի Մայանցին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ այգեգործական տարածքի 19-րդ թաղամասի թիվ 15/1 հողամասում երկհարկանի այգետնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 18
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2018 թվականի N 213-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Վահէ Հակոբի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0333-0090 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 458,0 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07062018-07-0076, տրված 2018 թվականի հունիսի 7-ին):

2. Վահէ Հակոբի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0333-0090 կադաստրային համարի 458,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 3/57:

3. Առաջարկել Վահէ Հակոբի Աբրահամյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 054 130 (երկու միլիոն հիսունչորս հազար մեկ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 19
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2018 թվականի N 214-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Միքայել Բորիկի Վերդյանի (ծնված՝ 1972 թվականի օգոստոսի 23-ին) և Լուիզա Նոդարի Վարդիկյանի (ծնված՝ 1973 թվականի հունվարի 17-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել փոխելու ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0064 կադաստրային համարի 527,7 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի և օրինականացնել նշված հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01062018-07-0056, տրված 2018 թվականի հունիսի 1-ին):

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Միքայել Բորիկի Վերդյանին և Լուիզա Նոդարի Վարդիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0064 կադաստրային համարի հողամասում առկա է ինքնակամ կառուցված պարիսպ՝ S=1,55 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ Միքայել Բորիկի Վերդյանին և Լուիզա Նոդարի Վարդիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0064 կադաստրային համարի հողամասում ինքնակամ կառուցված պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, պարիսպը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Միքայել Բորիկի Վերդյանին և Լուիզա Նոդարի Վարդիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0064 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 527,7 քառ.մ մակերեսով փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Միքայել Բորիկի Վերդյանին և Լուիզա Նոդարի Վարդիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0064 կադաստրային համարի 527,7 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 2/29:

3.Միքայել Բորիկի Վերդյանին և Լուիզա Նոդարի Վարդիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 2/29 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին պետք է վճարեն հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 366 735 (երկու միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար

յոթ հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, N 900105228218 հաշվին՝ 2 418 (երկու հազար չորս հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման չորրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության նախարարություն և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 19
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2018 թվականի N 215-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հունիսի 15-ին կայացած մրցույթում հաղթող ճանաչված Սուսաննա Սերյոժայի Թադևոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1) պաշտոնում 2018 թվականի հունիսի 19-ից:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 19
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2018 թվականի N 216-Ա

ԱՆԱՀԻՏ ԱՐԱՄԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հունիսի 15-ին կայացած մրցույթում հաղթող ճանաչված Անահիտ Արամի Մարգարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետի (ծածկագիր 2.1-1) պաշտոնում 2018 թվականի հունիսի 19-ից:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 19
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունիսի 2018 թվականի N 217-Ա

ԱԶԱՏՈՒՀԻ ՍԱՐԳՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժի 6-րդ փողոցի թիվ 87 տան բնակիչ Ազատուհի Սարգսի Հովհաննիսյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ ընտանիքը չունի սեփական տուն, ինքը միայնակ մայր է, ներկայումս չի աշխատում, ունի առողջական խնդիրներ, տղան՝ Նարեկ Քաջիկի Հովհաննիսյանը, նույնպես ունի առողջական խնդիրներ, անընդհատ գտնվում է բժիշկների հսկողության տակ և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Ազատուհի Սարգսի Հովհաննիսյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին, բյուջեի համապատասխան հոդվածից Ազատուհի Սարգսի Հովհաննիսյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունիսի 2018 թվականի N 218-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 10-Ն որոշումը և Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի առաջարկը, ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2018 թվականի հուլիսի 26-ին, ժամը 17:00-ին կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն թիվ 1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների, նախավճարի և քայլի չափի:
2. Հաստատել հրապարակային ծանուցման տեքստը, համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Հանձնարարել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի հրապարակային ծանուցման հրապարակումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունիսի 20
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
հունիսի 18-ի N 218-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը*	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը (դրամ)	Նախա-վճարի չափը (դրամ)	Քայլի չափը (դրամ)
1	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, թիվ 60/1, 07-057-0361-0028	0.19059	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	8576550	428828	428828
2	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 5, 07-057-0361-0024	0.14305	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	6437250	321863	321863
3	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 7, 07-057-0361-0026	0.15569	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	7006050	350303	350303
4	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 9, 07-057-0361-0027	0.1281	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	5764500	288225	288225
5	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 28, 07-057-0361-0023	0.1939	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	8725500	436275	436275
6	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 34 փողոց, թիվ 16, 07-057-962-002	0.0739	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	3325500	166275	166275
7	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 36 փողոց, թիվ 6, 07-057-936-014	0.1000	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	4500000	225000	225000
8	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 07-030-0111-0159	0.22019	գյուղատնտեսական այլ հողատեսքեր	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	գյուղատնտեսական այլ հողատեսք	չկա	250000	12500	12500
9	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ Գլխավոր խճուղի 26, 07-030-0111-0155	0.1002	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	899395	44970	44970
10	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 17 փողոց, թիվ 8, 07-030-0111-0119	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
11	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 17 փողոց, թիվ 9, 07-030-0111-0125	0.132	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	1184832	59242	59242
12	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 2, 07-030-0111-0153	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
13	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 4, 07-030-0111-0154	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
14	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 5, 07-030-0111-0144	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
15	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 6, 07-030-0111-0152	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
16	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 7, 07-030-0111-0147	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
17	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 15 փողոց, թիվ 1, 07-030-0111-0148	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
18	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 15 փողոց, թիվ 3, 07-030-0111-0146	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600	44880	44880
19	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 8 փողոց, թիվ 9/1, 07-030-0015-0011	0.02273	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	120015	6001	6001
20	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 07-042-0462-0002	0.885035	գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	անջրդի IV կարգ	չկա	500000	25000	25000

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
հունիսի 20-ի N 218-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի փակ դասական աճուրդ

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը*	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը (դրամ)
1	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, թիվ 60/1, 07-057-0361-0028	0.19059	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	8576550
2	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 5, 07-057-0361-0024	0.14305	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	6437250
3	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 7, 07-057-0361-0026	0.15569	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	7006050
4	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 9, 07-057-0361-0027	0.1281	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	5764500
5	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 28, 07-057-0361-0023	0.1939	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	8725500
6	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 34 փողոց, թիվ 16, 07-057-962-002	0.0739	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	3325500
7	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 36 փողոց, թիվ 6, 07-057-936-014	0.1000	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	չկա	4500000
8	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 07-030-0111-0159	0.22019	գյուղատնտեսական այլ հողատեսքեր	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	գյուղատնտեսական այլ հողատեսք	չկա	250000
9	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ Գլխավոր խճուղի 26, 07-030-0111-0155	0.1002	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	899395
10	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 17 փողոց, թիվ 8, 07-030-0111-0119	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
11	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 17 փողոց, թիվ 9, 07-030-0111-0125	0.132	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	1184832
12	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 2, 07-030-0111-0153	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
13	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 4, 07-030-0111-0154	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
14	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 5, 07-030-0111-0144	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
15	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 6, 07-030-0111-0152	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
16	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 16 փողոց, թիվ 7, 07-030-0111-0147	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
17	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 15 փողոց, թիվ 1, 07-030-0111-0148	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
18	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 15 փողոց, թիվ 3, 07-030-0111-0146	0.1	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	897600
19	Ջրվեժ համայնք, Զովք գյուղ 8 փողոց, թիվ 9/1, 07-030-0015-0011	0.02273	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	120015
20	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 07-042-0462-0002	0.885035	գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	անջրդի IV կարգ	չկա	500000

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց 76:
Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:
Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ջրվեժի համայնքապետարան (Մելքոնյան փողոց 76, 2-րդ հարկ, հեռախոս 644929):
Աճուրդը կայանալու է 2018 թվականի հուլիսի 26-ին ժ. 17:00-ին, Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:
Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2018 թվականի հուլիսի 23-ը, ժամը 17:00-ը: